Առողջապահության նախարարություն

Ինչ պետք է իմանալ COVID-19 պատվաստման ձեր ժամադրության մասին

Տարբերակ 2.0 - Մարտի 29, 2021թ.

Ակնարկ. այս փաստաթուղթը մի քանի փաստաթղթերի թարմացված համադրությունն է, որոնք նախկինում կոչվում էին «Ինչ պետք է իմանալ COVID-19 պատվաստման ձեր ժամադրությունից առաջ» և «Հետ-պատվաստման խնամքի թերթիկ»:

Այս ուղեցույցը տրամադրում է միայն հիմնական տեղեկատվություն: Այս փաստաթուղթը նախատեսված չէ տրամադրել կամ փոխարինել բժշկական խորհրդատվություն, ախտորոշում կամ բուժում, կամ իրավաբանական խորհրդատվություն:

Դուք իրավունք ունեք ստանալ COVID-19 պատվաստում: Խնդրում ենք կարդալ այս փաստաթուղթը, որպեսզի իմանաք՝ ինչ սպասել ձեր առաջիկա պատվաստման ժամադրության ժամանակ:

COVID-19 պատվաստման նախապատրաստում

Ի՞նչ պետք է բերեմ իմ ժամադրությանը:

- Ձեր առողջության քարտը / Օնտարիոյի Առողջության ապահովագրության ծրագրի (Ontario Health Insurance Plan, OHIP) քարտը: Եթե OHIP քարտ չունեք, բերեք պետության կողմից տրված լուսանկարով նույնականացման մեկ այլ փաստաթուղթ՝ վարորդական իրավունք, անձնագիր, կարգավիճակի քարտ կամ այլ մարզային առողջության քարտեր: Դուք կարող եք ստանալ պատվաստումը, անգամ եթե չունեք OHIP քարտ:
- Ձեր պատվաստումների արձանագրությունը, եթե առկա է՝ ձեր COVID-19 պատվաստումները դրա մեջ գրանցելու համար:
- Ալերգիայի ձևաթուղթ, եթե անհրաժեշտ է

- Ցանկացած օժանդակ սարք, որը կարող է ձեզ պետք գալ (օրինակ՝ սկուտեր, անվասայլակ, ձեռնափայտ) և իրեր, որոնք կօգնեն ձեզ անցկացնել ժամանակը (օրինակ՝ բջջային հեռախոս, գիրք):
- Կարդալու ակնոցներ և/կամ լսողական սարքեր, եթե անհրաժեշտ է
- Ձեր դիմակը
- Աջակցող անձ, եթե անհրաժեշտ է (օրինակ՝ թարգմանիչ, անձ, ով կօգնի ձեզ պատվաստման ընթացքում):

Ի՞նչ պետք է անեմ իմ ժամադրությանը նախապատրաստվելու համար:

- Կարդացեք Vaccine Information Sheet (Պատվաստման տեղեկատվական թերթիկը) և դիմեք ձեր առողջապահական խնամքի մատակարարին, եթե ունեք հարցեր ձեր բժշկական պատմության կամ ալերգիաների վերաբերյալ:
- Ընդունեք ձեր սովորական դեղամիջոցները և սնվեք սովորականի պես: Նախքան կլինիկա գալը համոզվեք, որ ուտելու բան ունեք, որպեսզի պատվաստման ընթացքում թույլ չզգաք:
- Հագեք ազատ վերնահագուստ կամ վերնաշապիկ, որպեսզի պատվաստումը կատարելու համար բուժաշխատողը հեշտ հասնի ձեր թևի վերին հատվածին:
- Մի կրեք բուրավետ օծանելիք:
- **Մի եկեք կլինիկա, եթե ունեք** symptoms of COVID-19 **(COVID-19-ի ախտանիշներ): Զանգահարեք կլինիկա և հետևեք նրանց ցուցումներին:**
- Մի եկեք ձեր ժամադրությունից ավելի քան 10 րոպե շուտ, որպեսզի խուսափեք կլինիկայում մարդկանց կուտակումներից:
- Կարող է պահանջվել, որ նախքան ձեր ժամադրությունը սպասեք դրսում: Խնդրում ենք հագնվել եղանակին համապատասխան:

Ի՞նչ կարող եմ ակնկալել, երբ գամ իմ ժամադրությանը:

Առողջապահական խնամքի մատակարարները շատ զգույշ են լինում, որպեսզի կանխեն COVID-19-ի տարածումը պատվաստումների ժամանակ: Ձեր այցի ընթացքում կլինիկայի աշխատակիցները կձեռնարկեն բոլոր նախազգուշական միջոցները ձեր առողջությունն ու անվտանգությունն ապահովելու համար: Կլինիկաներում գործելու են հանրային առողջապահական միջոցառումներ, ինչպիսիք են՝ ֆիզիկական հեռավորությունը, ձեռքերի ախտահանումը, դիմակի կրումը: Կլինիկայում բոլոր առողջապահական խնամքի մատակարարները, հիվանդները, այլ աշխատակիցները և այցելուները պետք է հետևեն բոլոր

առողջապահական միջոցառումներին: Խնդրում ենք կարդալ և հետևել կլինիկայում ներկայացված բոլոր ազդանշաններին կամ հրահանգներին:

- Ձեր ժամադրությունը հաստատելու համար ձեզ կխնդրեն տրամադրել ձեր OHIP կամ կարգավիճակի քարտը (կամ, եթե չկա OHIP քարտ, պետության կողմից տրված լուսանկարով ցանկացած նույնականացման փաստաթուղթ):
- Նախքան կլինիկա մտնելը ձեզ կխնդրեն պատասխանել մի շարք հարցերի՝ համոզվելու համար՝ ունեք COVID-19-ի որևէ նշաններ կամ ախտանիշներ, թե ոչ:
- Ձեզ կհարցնեն ձեր բժշկական պատմության մասին (օրինակ՝ ունեցած ցանկացած ալերգիաների մասին):
- Ձեզ կխնդրեն կլինիկայում կրել դիմակ, ձեռքերը մաքրել և պահպանել ֆիզիկական հեռավորություն (առնվազն 2 մետր/6 ֆուտ):
- Պատվաստումը ստանալուց հետո ձեզ կխնդրեն սպասել 15-30 րոպե՝ ձեր առողջության անսպասելի փոփոխությունները կամ ալերգիկ ռեակցիաները վերահսկելու համար:

Իսկ եթե՞ ես ալերգիաներ ունեմ:

Պատվաստման կլինիկայի առողջապահական խնամքի մատակարարը ձեզ կհարցնի ալերգիաների մասին: Ստուգեք COVID-19 Vaccine Information Sheet-ը (COVID-19 Պատվաստման տեղեկատվական թերթիկ) պատվաստանյութի բաղադրիչների, այդ թվում՝ պոլիէթիլենգլիկոլի, տրոմեթամինի և պոլիսորբատի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար:

- Եթե COVID-19 պատվաստանյութի նախորդ դեղաչափի կամ նրա որևէ բաղադրիչի նկատմամբ ունեցել եք ալերգիկ ռեակցիա (ներառյալ ծանր ռեակցիա՝ անաֆիլաքսիս), ապա պատվաստումից առաջ պետք է խորհրդակցեք ալերգոլոգի կամ իմունոլոգի հետ՝ համոզվելու համար, որ պատվաստանյութը կարելի է անվտանգ կերպով ստանալ:
- Դուք կարող եք ստանալ COVID-19 պատվաստումը, եթե 4 ժամվա ընթացքում ունեցել եք ալերգիկ ռեակցիա և/կամ անաֆիլաքսիս, որը տեղի է ունեցել պատվաստանյութի կամ ներարկային դեղամիջոցների նկատմամբ, որոնք չեն պարունակում COVID-19 պատվաստանյութերի բաղադրիչ կամ խաչաձև փոխազդող բաղադրիչ: Պատվաստումից հետո ձեզ կխնդրեն 30 րոպե սպասել կլինիկայում:
- Դուք կարող եք ստանալ COVID-19 պատվաստումը, եթե նախկինում երբևէ ունեցել եք զգալի ալերգիկ ռեակցիաներ և/կամ անաֆիլաքսիս որևէ սննդամթերքի,

թմրանյութի, թույնի, լատեքսի նկատմամբ կամ այլ ալերգեններ, որոնք չեն առնչվում COVID-19 պատվաստանյութերի հետ: Պատվաստումից հետո ձեզ կխնդրեն կլինիկայում սպասել առնվազն 15 րոպե:

- Դուք կարող եք ստանալ պատվաստումը, եթե ունեք ալերգիկ խնդիրներ, օրինակ՝ հարբուխ, փռշտոց, քթի և աչքերի քոր, ասթմա և էկզեմա: Պատվաստումից հետո ձեզ կխնդրեն կլինիկայում սպասել առնվազն 15 րոպե:

Ալերգիա ունեցող անձանց համար նախատեսված ավելի մանրամասն առաջարկությունների համար խնդրում ենք կարդալ Vaccination Recommendations for Special Populations (Հատուկ խմբերում ներառված բնակչության պատվաստումների վերաբերյալ առաջարկություններ) ուղեցույցը:

Իսկ եթե՞ ես ունեմ այլ բժշկական վիճակներ:

Եթե հղի եք, կրծքով եք կերակրում , ունեք աուտոիմուն հիվանդություն կամ իմունային անբավարարություն որևէ հիվանդության կամ բուժման պատճառով, նախքան պատվաստումը պետք է խոսեք ձեր առողջապահական խնամքի մատակարարի հետ: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կարդալ Vaccination Recommendations for Special Populations (Հատուկ խմբերում ներառված բնակչության պատվաստումների վերաբերյալ առաջարկություններ) ուղեցույցը: Ձեր առողջապահական խնամքի մատակարարի հետ պետք է քննարկեք, թե արդյոք ճիշտ է պատվաստում ստանալը՝ ելնելով ձեր բժշկական վիճակից:

Իսկ եթե՞ ես ընդունում եմ արյունը նոսրացնող միջոցներ:

Դուք կարող եք ստանալ պատվաստումը, եթե ունեք արյունահոսության խնդիր, հեշտությամբ կապտուկներ եք ունենում կամ ընդունում եք արյունը նոսրացնող դեղամիջոցներ (օրինակ՝ վարֆարին կամ հեպարին):

Իսկ եթե՞ վերջին պատվաստման ժամանակ ուշագնաց եմ եղել կամ վախենում եմ ասեղներից:

Եթե նախորդ պատվաստումների կամ ընթացակարգերի ժամանակ ուշագնաց եք եղել կամ գլխապտույտ եք ունեցել, կամ շատ եք վախենում ներարկումներից, միևնույն է պետք է ստանաք պատվաստումը: Կլինիկայում առողջապահական խնամքի մատակարարին տեղեկացրեք այդ մասին, որպեսզի ձեզ համապատասխան աջակցություն ցուցաբերվի: Կարող եք ձեզ հետ մարդ բերել, ով ձեզ կաջակցի:

COVID-19-ի հետ-պատվաստման խնամք

Ի՞նչ պետք է անեմ պատվաստումից անմիջապես հետո:

- Պատվաստումից հետո դուք պետք է կլինիկայում մնաք 15-30 րոպե, որպեսզի համոզվեք, որ չունեք ալերգիկ ռեակցիա: Ալերգիկ ռեակցիաները հաճախ չեն լինում: Պատվաստող անձնակազմը գիտի՝ ինչպես արձագանքել ալերգիկ ռեակցիաներին: Եթե նկատել եք մաշկի ցան, դեմքի կամ բերանի այտուցվածություն, շնչառության հետ կապված խնդիրներ և/կամ վատ եք զգում, այդ մասին տեղեկացրեք աշխատակիցներին:
- Կլինիկայում սպասելիս անպայման կրեք դիմակ և աշխատեք մարդկանցից լինել 2 մետր/6 ֆուտ հեռավորության վրա:
- Կլինիկայից դուրս գալուց առաջ մաքրեք ձեռքերը սպիրտ պարունակող ախտահանիչ միջոցով:
- Մի վարեք մեքենա կամ այլ տրանսպորտային միջոց պատվաստումից հետո առնվազն 15-30 րոպեի ընթացքում (ինչպես խորհուրդ է տալիս առողջապահական խնամքի մատակարարը) կամ եթե վատ եք զգում:
- Եթե ձեզ ինչ-որ մեկը վերցնում է կլինիկայից, ապա դա պետք է արվի կլինիկայում 15 րոպե սպասելուց հետո: Ձեզ օգնող անձը կամ վարորդը պետք է հետևի կլինիկայի անձնակազմի ցուցումներին այն մասին, թե որտեղ պետք է հանդիպեն/վերցնեն ձեզ:

Ի՞նչ սպասեմ առաջիկա մի քանի օրվա ընթացքում:

- Դուք կարող եք պատվաստումից որոշ կողմնակի ազդեցություններ ունենալ: Դրանք պետք է անհետանան մի քանի օրվա ընթացքում:
- Ընդհանուր կողմնակի ազդեցություններն են՝ ներարկման տեղում ցավը, կարմրությունը կամ այտուցը: Ցավը մեղմացնելու համար ներարկման տեղի շրջանում կարող եք դնել սառը, խոնավ շոր:
- Կարող են լինել այլ ախտանիշներ՝ հոգնածություն, գլխացավ, մկանային ցավ, դող, հոդացավ և ջերմություն: Անհրաժեշտության դեպքում ցավի կամ ջերմության պարագայում կարող եք ընդունել ցավազրկող կամ ջերմիջեցնող (օրինակ՝ ացետամինոֆեն կամ իբուպրոֆեն):
- Պատվաստումից հետո լուրջ կողմնակի ազդեցություններ հազվադեպ են լինում: Այնուամենայնիվ, եթե պատվաստումից հետո երեք օրվա ընթացքում ունենաք

հետևյալ անբարենպաստ ռեակցիաներից որևէ մեկը, անհապաղ դիմեք բժշկական օգնության կամ զանգահարեք 911, եթե շատ վատ եք զգում.

- եղնջացան
- դեմքի կամ բերանի այտուց
- դժվարեցված շնչառություն
- գունատություն և լուրջ քնկոտություն
- բարձր ջերմություն (40°C-ից բարձր)
- ցնցումներ կամ նոպաներ
- այլ լուրջ ախտանիշներ (օրինակ՝ ծակծկումներ կամ թմրություն):

- Շատ հազվադեպ դեպքերում, AstraZeneca/COVISHIELD պատվաստանյութը կարող է ունենալ կողմնակի ազդեցություն, որը հայտնի է Vaccine-Induced Prothrombotic Immune Thrombocytopenia (VIPIT) (Պատվաստանյութով պայմանավորված պրոտոմբոզային իմունային թրոմբոցիտոպենիա, VIPIT) անվանումով: Եթե պատվաստումից հետո ունեք հետևյալ ախտանիշներից որևէ մեկը, անհապաղ դիմեք բժշկական օգնության.
    - հևոց
    - ցավ կրծքավանդակում
    - ձեռքի կամ ոտքի այտուց կամ սառնություն
    - որովայնի մշտական ցավ
    - ուժեղ կամ վատթարացող գլխացավեր կամ աղոտ տեսողություն
    - բազմաթիվ մանր կապտուկներ, մաշկի տակ կարմիր կամ մանուշակագույն բծեր կամ արյան բշտիկներ:

- Եթե անհանգստանում եք, որ պատվաստումից հետո կարող եք ունենալ որևէ ռեակցիաներ, կապվեք ձեր առողջապահական խնամքի մատակարարի հետ: Կարող եք նաև կապվել ձեր local public health unit-ի (տեղական հանրային առողջապահության ստորաբաժանում) հետ՝ հետաքրքրող հարցերն իրենց ուղղելու կամ անբարենպաստ ռեակցիայի մասին զեկուցելու համար:

Ինչ է պետք հիշել պատվաստումը ստանալուց հետո

- **Շարունակեք կրել դիմակ, մարդկանցից պահել առնվազն 2մ հեռավորություն և սահմանափակել/խուսափել տնից դուրս գտնվող այլ անձանց հետ շփումից:**
- COVID-19 պատվաստումից առնվազն 28 օրվա ընթացքում չի կարելի ստանալ այլ պատվաստումներ (միայն այն դեպքում, եթե ձեր առողջապահական խնամքի մատակարարն այն անհրաժեշտ է համարում):

- Եթե պլանավորում եք հղիանալ դեղաչափը ստանալուց 28 օրվա ընթացքում, ապա պետք է խոսեք ձեր առաջնային խնամքի մատակարարի հետ:
- Պահպանեք այս թերթիկը (կամ պատվաստումների արձանագրությունը) ԵՎ ձեզ հետ բերեք տպված COVID-19 պատվաստման անդորրագիրը COVID-19 հետագա պատվաստումների համար, ինչպես հանձնարարված է պատվաստման կլինիկայի կողմից (ձեր երկրորդ դեղաչափի համար՝ կախված այն բանից, թե ինչ պատվաստանյութ է ներարկվել):